

խիւ կորզել անոնց պապենական առեւտուրը Արեւելքի մէջ:

Հետաքրքրական է, որ Թուրքերը, որոնք Անգլիոյ ձէյմս Ա.ի ատեն եւ անկէ վերջ ենթակայ եղան անգլիացիներու չարախօսութեանց եւ սաղրանքներուն, ոչ իսկ քիչ ինչ ականջ դրին կամ հետեւեցան անոնց: Իսկ Պարսիկները, որոնք առաջին անգամ Անգլիացոց հետ յարաբերիլ սկսան Շահ Ապպաս Մեծի ատեն, այդ խորամանկ Շահէն լիպպէս օգտագործուեցան (Օրմուզի գրաւումը), առանց փոքր առաւելութիւն մ'իսկ շահելու հայ առեւտրականներուն վրայ: Աբբաս Մեծ պարպագէտ Անգլիացոց «քթին խնդաց»:

Էնթոնի ձէնքինսըն նոյնիսկ փորձեր ալ ըրաւ Վրաց երկիրը զրկելու Անգլիացի էտուարտ Քլարք անուն իր պաշտօնեան, որ, սակայն, կասկածելի ըլլալուն Վրաց սահմանագլուխին վրայ ձերբակալուեցաւ եւ հազիւ ազատեցաւ Հայ վաճառականներու եւ Շամախի մահմետական տէրին յանձնարարականներուն շնորհիւ: Այդ յանձնարարականները տրուած էին իբր մետաքսի վաճառականի, եւ ատոր շնորհիւ հոնկէ ետ վերադարձուեցաւ:

Անգլիացոց գործածած միջոցները, ինչպէս ըսի, յաջողութեամբ չպսակուեցան: Հետաքրքրական անոնք աւելի նեղուեցան այս շրջանին մէջ: Տասնեակ մը տարիներ վերջ դրուած թուղթերը ցոյց կուտան զրեթէ յուսահատական կացութիւն մը: Անգլիական գործակալները կ'առաջարկեն նոյնիսկ, լքել այս կողմերու վաճառականութիւնը, որ հոսկ կատարուեցաւ ալ: Հայ վաճառականները մնացին բացարձակ տէր այս կողմերու նաեւ Հնդկաց երկրէն ցամաքով բերուած ապրանքներուն վաճառականութեան:

Ժէ դարուն սկսելով՝ Անգլիացիք նոր փորձեր կատարեցին, առանց Հայոց միջնորդութեան, գոնէ Պարսկաստանէն 100,000 հակ մետաքս Անգլիա բերելու: Արդէն Փորթուկալցիները կորսնցուցած էին Օրմուզի նաւահանգիստը Պարսից ծոցին վրայ, որուն տիրացաւ Շիրազի Իմամ Դուլի Սանը, Անգլիացոց օգնութեամբ եւ Պարսկաստանի միացոյց:

Անգլիացիները Անգլիայէն Ափրիկէի տա-

կով, Բարեյուսոյ գլուխի շրջանով Օրմուզի ճամբան բռնեցին: Թոմաս Հէրպէրդ այս ճամբորդութեանց եւ զետպանութեանց մէկուն երկարատատում մանրամասնութիւնները ու նկարագրութիւնը կուտայ: Այս բանակցութիւններն ալ որեւէ արդիւնք չտուին, որովհետեւ խորամանկ Շահ Աբբաս՝ Ջուղայեցիները Սպահան գաղթեցնելով եւ Հայ վաճառականներուն զիւրութիւններ, դրամադուլիս տալով՝ հրապարակին տիրացած էր, որով անկարելոր էր որեւէ օտար պետութեան հետ պայմանաւորուիլ:

Հայոց եւ Վենետիկցոց միջեւ վաճառականական կապերը դեռ հին ու սոմուր էին: Այնքան ամուր, որ 1569-ին Ղազվինէն Անգլիացի Լորէնս Չէփմէն նամակ մը գրելով կ'իմացնէ յուսահատած. «Հայոց եւ Վենետիկցոց միջեւ առեւտուրը կ'ուրել անկարելի է»: Ու կ'աւելցնէ. «Շահը իր դանձարանը, բոլոր իր կենաց ընթացքին բնաւ կերպաս չառաւ, եւ այժմ ալ չպիտի սկսի առնել: Իր բոլոր առեւտուրը հում մետաքս է, որ միշտ դրամով Հայոց եւ Թուրքաց կը ծախէ, եւ անոնց, որոնք կը գնեն»: 1) Ու հայ վաճառականներն ալ գնելով իրենց զիւղերէն կամ Պարսից Շահէն կը բերէին Կ. Պոլիս, ալ աւելի Հալէպ, անկէ իրենց կամ Վենետիկցոց միջոցաւ Թրիփոլիի նաւահանգստէն Վենետիկ կը տանէին:

Վենետիկի դիւաններուն մէջ բարձրագոյն վաւերաթուղթեր կան Հայոց եւ Վենետիկցիներու վաճառականութեան նայող: Հ. Ղ. Ալիշան, խօսելով այս թուղթերուն պարունակութեանց մասին, կը կազմէ ցանկ մը ներածուած ապրանքներու, Հայաստանի ամէն կողմէն: Սակայն, «ամենէն աւելի Մետաքս եւ Յիսի. սա յարեւմտեան Փոքր Ասիոյ, միւսն յարեւելեան Հայոց եւ ի Պարսից»: 2) Այսինքն՝ թէ Յիսիի Փոքր Ասիայէն (անշուշտ զխաւորարար Անգարայէն), իսկ մետաքս արեւելեան Հայաստանէն, այսինքն՝ Կովկասեան Հայաստանէն, Շամախէն, Շիրվանի նահան-

1) Hakluyt's Voyages, II Vol. էջ 111:

2) Հայ-Վենետ, 1896, Ս. Ղազար, էջ 429: